«ԴԱՐՁՅԱԼ ԿԳԱՄ»

«ՀՈՒՅՍԻ ՃԱՌԱԳԱՅԹ»
աստվածաշնչյան դասընթաց

Դաս 3

«ԴԱՐՁՅԱԼ ԿԳԱՄ»

Մեր օրերում դժվար է գտնել մի մարդու, ով չերազի լավագույն, ավելի կատարյալ աշխարհի մասին: Կգա՞ արդյոք այնպիսի ժամանակ, երբ մարդու ամենանվիրական երազանքները հավիտենական խաղաղության և երջանկության մասին կիրականանան:

Մարդկության ճանապարհը ծածկված է խորտակված երազանքներով, հույսերով ու սպասումներով: Մեր օրերում մնացել է միայն մի հույս, որ աշխարհը դեպի լավը կփոխվի, և այդ հույսը Քրիստոսի երկրորդ գալուստն է: Դա գլխավոր հույսն է, վերջնակետը ամբողջ փրկության ծրագրի, որն Աստված սկսել է իրագործել երկրի վրա մոտ վեց հազար տարի առաջ: Այդ հույսը Աստծո խոսքը համարում է միակը կործանվող աշխարհի համար: Այն անձնապես վերաբերում է յուրաքանչյուր մարդու: «Եվ այն ժամանակ կերևա մարդու Որդու նշանը երկնքում, և այն ժամանակ կոծ կանեն երկրի բոլոր ազգերը և կտեսնեն մարդի Որդին գալիս երկնքի ամպերի վրա զորությունով և շատ փառքով» (Մատթեոս 24.30): «Ահա Նա գալիս է ամպերով, և ամեն աչք կտեսնի Նրան» (Հայտնություն 1.7):

Առանց Քրիստոսի երկրորդ գալստյան մարդկության փրկության ամբողջ ծրագիրը անավարտ կլիներ: Քրիստոսի առաջին գալուստը՝ Նրա ծնունդը, և Նրա երկրորդ գալուստը այնպես են փոխկապակցված, ինչպես ցանքը և հունձքը: Քրիստոսը մի ժամանակ երկիր եկավ ինչպես Աստված մարդկային մարմնով: Մեզ բացատրություն տրված չէ, թե դա ինչպես հնարավոր դարձավ: Նրա մարմնացումը անվանված է «աստվածապաշտության մեծ խորհուրդ» (Ա Տիմոթեոս 3.16): Նա տվեց Իր կյանքը, որպեսզի մարդկության մեղքի պարտքը վճարի: Նա մեզ համար մեռավ, որպեսզի «ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես 3.16): Դա ցանքն էր: Երկրորդ անգամ Նա կգա, որպեսզի հավաքի հունձքը, թանկարժեք հոգիները, ում համար Նա մեկ անգամ մեռավ խաչի վրա: «Քրիստոսը մեկ անգամ պատարագվեց շատերի մեղքերը վեր առնելու համար և երկրորդ անգամ առանց մեղքի կհայտնվի Իրեն սպասողներին՝ փրկության համար» (Եբրայեցիս 9.28):

Հին Կտակարանի մարգարեները գրել էին Քրիստոսի

առաջին գալստյան՝ Նրա ծննդի մասին, և բոլոր այդ մարգարեությունները կատարվեցին ամենայն մանրամասնությամբ: Դրա հիման վրա մենք միանգամայն վստահություն ունենք, որ մարգարեությունները Նրա երկրորդ գալստյան վերաբերյալ նույնպես կկատարվեն: Քրիստոսի երկրորդ գալուստն այնքան կարևոր իրադարձություն է, որ Սուրբ Գրքի բոլոր գրողները խոսում են նրա մասին: Նրանք ձգտում են բացատրել նպատակը, թե ինչի համար նորից Քրիստոսը կգա, նկարագրում են Նրա գալստյան փառքը և հետևանքները՝ կապված Նրա հայտնվելու հետ:

«Որովհետև մարդի Որդին գալու է իր Հոր փառքով իր հրեշտակների հետ, և այն ժամանակ ամեն մեկին կհատուցանի նրա գործերի համեմատ» (Մատթեոս 16.27): «Ահա Եհովա Տերը զորությամբ կգա, և նրա բազուկը կիշխի նրա համար, ահա իր վարձքը իր հետ է, և իր հատուցումը՝ Իր առաջին» (Եսայիա 40.10): Այն ժամանակ ամեն Նրան հավատացող առատորեն կվարձատրվի բոլոր դժվարությունների և զրկանքների փոխարեն, որ ստիպված էր կրել կյանքում:

Սուրբ Գրքի մեկ ուրիշ հատվածում Փրկիչն ասում է. «Ձեր սրտերը թող չխռովեն, Աստծուն հավատացեք, և ինձ հավատացեք: Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան, ապա թե ոչ ես ձեզ կասեի. Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ ինձ մոտ կառնեմ, որ ուր ես եմ, դուք էլ լինեք» (Հովհաննես 14.1-3): «Եվ Նա կուղարկի Իր հրեշտակները մեծաձայն փողով, և նրանք կժողովեն նրա ընտրվածներին չորս հողմից՝ երկնքի ծայրերից մինչև նրա մյուս ծայրերը» (Մատթեոս 24.31):

«Սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին, որ կնորոգի մեր խոնարհ մարմինը, որ իր փառավոր մարմնին կերպարանակից լինի այն զորությունով, որ կարող է ամեն բան հնազանդեցնել Իրեն» (Փիլիպպեցիս 3.20,21): «Հանկարծ մի ակնթարթում՝ հետին փողի ժամանակին, որովհետև փողը կփչվի, և մեռելները հարություն կառնեն անապականելի, և մենք կփոխվենք: Երբ որ այս ապականացուն անապականությունը հագնի, և այս մահկանացուն՝ անմահությունը, այն ժամանակ կլինի այն խոսքը, որ գրված է, թե մահն ընկղմվեց հաղթության մեջ» (Ա Կորնթացիս 15.52-54):

Գրքի այս խոսքերից երևում է, որ Քրիստոսը կգա, որպեսզի յուրաքանչյուրին իր գործերի համեմատ հատուցի, որպեսզի Իր զավակներին անմահ մարմին-

ներ տա և տանի նրանց երկնային Հոր տունը, և որպեսզի ընդմիշտ ոչնչացնի մահը:

Պողոս առաքյալը դա նկարագրում է Ա Թեսաղոնիկեցիս 4.15,16-ում. «Որովհետև Ինքը՝ Տերը, հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո փողով վայր կգա երկնքից, և Քրիստոսով մեռելները առաջ հարություն կառնեն, և հետո մենք, որ կենդանի ենք մնացած, նրանց հետ մեկտեղ ամպերով օդի մեջ կհափշտակվենք Տիրոջը դիմավորելու և այնպես ամեն ժամանակ Տիրոջ հետ կլինենք»:

Այսպիսով կկատարվի Քրիստոսի կարևոր խոստումներից մեկը՝ խոստումն այն մասին, որ մահացածները նորից կկենդանանան: Այդ մասին մենք կարդում ենք Հովհաննեսի 5.28,29-ում. «Սրա վրա մի զարմանաք, որովհետև ժամանակ կգա, որ ամենքը, որ գերեզմաններում են, նրա ձայնը կլսեն: Եվ դուրս կգան նրանք, որ բարի են գործել՝ դեպի կյանքի հարությունը, և նրանք, որ չար են գործել՝ դեպի դատաստանի հարությունը»:

Առաջին դարի քրիստոնյաները հավատում էին իրենց Տիրոջ խոսքերին, որ Նա նորից կգա: Բայց քանի դարերն անցնում էին, եկեղեցու հույսն աստիճանաբար թուլանում էր: Բազմաթիվ անգամ փորձեր են արվել Քրիստոսի երկրորդ

գալստի մասին ուսմունքը ներկայացնել ինչպես այլաբանություն, նրան «հոգևոր» նշանակություն տալ, այսինքն այն ներկայացնել ոչ թե ինչպես բառացի դեպք, այլ հավատացյալի հոգևոր վերածնունդ: Ոմանք, օրինակ, հավատում են, որ Քրիստոսը գալիս է, երբ մարդը Նրան հավատով ընդունում է սրտում: Մյուսները համարում են, որ մահվան րոպեն Քրիստոսի գալուստն է: Բայց երբ մենք քննում ենք Գիրքը, գտնում ենք պարզ և որոշակի ցուցումներ այն մասին, որ Քրիստոսի գալուստը կլինի ոչ հոգևոր, այլ բառացի, բոլորի կողմից տեսանելի իրադարձություն:

Գործք առաքելոց 1.9-11-ում նկարագրված է Քրիստոսի համբարձումը. «Եվ երբ որ այս ասաց, նրանք նայելիս՝ վերացավ և մի ամպ առավ նրան նրանց աչքերից: Եվ դեռ որ նրանք աչքերը ուղղած մտիկ էին տալիս դեպի երկինքը նրա գնալին, ահա երկու մարդիկ երևացին նրանց սպիտակ հանդերձներով, որ և ասացին. Ով գալիլեացի մարդիկ, ի՞նչ եք կանգնել և մտիկ եք անում դեպի երկինքը. այս Հիսուսը, որ ձեզանից վերացավ երկինքը, այսպես կգա, ինչպես նրան տեսաք երկինք գնալիս»:

Աշակերտները տեսան, որ Նա համբարձվեց ամպի վրա: Նրա հարություն առած մար-

մինը իրական մարմին էր, ինչպես նկարագրված է Ղուկաս 24.39-43-ում. Նա թույլ տվեց շոշափել Իրեն և նրանց հետ կերավ: Եվ այն ձևով, ինչպես Նա համբարձվեց, այդպես էլ կգա՝ իրական մարմնով, տեսանելի և ամպի վրա: «Եվ այն ժամանակ կտեսնեն մարդի Որդին ամպերի վրա՝ եկած զորությամբ և մեծ փառքով» (Ղուկաս 21.27):

Ի՞նչ ամպ է դա: Գրքում ճշգրիտ չի ասվում այդ մասին, բայց դժվար չէ հասկանալ, որ դա հրեշտակների ամպն է: «Եվ երբ որ մարդի Որդին Իր փառքով կգա և ամեն սուրբ հրեշտակները Նրա հետ, այն ժամանակ կնստի իր փառաց աթոռի վրա» (Մատթեոս 25. 31): Հայտնություն 5.11-ում գրված է, որ հրեշտակների թիվը «բյուրերի բյուրեր և հազարների հազարներ» է: Պատկերացրեք այդ մեծ կենդանի ամպը, հրեշտակների այդ անթիվ բազմությունը, որ ուղեկցում է Քրիստոսին Նրա երկրորդ գալստյան ժամանակ: Դա անզուգական իրադարձություն է:

Դա մեծ օր կլինի բոլորի համար՝ թե՛ մարդկանց, թե՛ հրեշտակների: Միայն սատանան չի ուրախանում այդ օրվա մոտենալով, որովհետև դա երկրի վրա նրա իշխանության վերջն է նշանակում: Դրա համար նա ամեն ձևով ձգտում է մարդկանց ուշադրությունը շեղել այդ իրադարձությունից, նրա նշանակությունը փոքրացնել ու խեղաթյուրել և իր ցանցի մեջ գցել, ում որ հնարավոր է:

Քրիստոսը նախատեսեց դա և նախազգուշացրեց. «Եթե մեկն ասի ձեզ՝ Ահա այստեղ է Քրիստոսը կամ այնտեղ, չհավատաք: Որովհետև սուտ քրիստոսներ և սուտ մարգարեներ վեր կկենան, և մեծ նշաններ և հրաշքներ կտան, մինչև որ, եթե կարելի լիներ, ընտրվածներին էլ կմոլորեցնեին: Ահա առաջուց ասացի ձեզ. Արդ եթե ասեն ձեզ ահա անապատումն է, դուրս չգնաք, կամ ներսի սենյակումն է, չհավատաք: Որովհետև ինչպես կայծակը դուրս է գալիս արևելքից և երևում մինչև արևմուտք, այնպես էլ կլինի մարդի Որդու գալուստը» (Մատթեոս 24.23-27):

Այս խոսքերով մեծագույն խաբեություն և կեղծիք է կանխագուշակված: Ինչ-որ մեկը կհայտնվի և իրեն Քրիստոս կհռչակի: Խաբեությունն այնքան մեծ կլինի և նրբորեն քողարկված, որ Քրիստոսի «ընտրված» հետևորդները կարող են հրապուրվել: Հրաշքները ճշմարտության ապացույց չեն: Գրված է, որ չար հոգիները պետք է հրաշքներ կատարեն: «Որովհետև նրանք դևերի որդիներ են, որ նշաններ են անում» (Հայտնություն 16.14): «Սատա-

նան ինքն էլ լույսի հրեշտակի կերպարանքն իր վրա է առնում» (Բ Կորնթացիս 11.14): Նա կնմանակի Քրիստոսի գալուստը «ամեն զորությունով, սուտ նշաններով և հրաշքներով» (Բ Թեսաղոնիկեցիս 2.9): Բայց սատանան չի կարող ընդօրինակել Քրիստոսի գալստյան ձևը, ինչպես այն նկարագրված է Սուրբ Գրքի էջերում: Դրա համար շատ կարևոր է իմանալ Քրիստոսի գալստյան մանրամասնությունները, որպեսզի խաբված չլինենք: Քրիստոսը նախազգուշացրեց, որ խաբեությունն այնքան մեծ կլինի, որ և նրա հետևորդները կարող են սխալվել, եթե չիմանան Սուրբ Գիրքը: Դա կլինի ճակատագրական սխալ. այն նրանց հավիտենական կյանքից կզրկի:

Շատ մարդիկ վստահ են, թե Քրիստոսը գաղտնի կգա, և միայն հավատացյալները կիմանան այդ մասին: Բայց Աստծո Խոսքում գրված է. «Ինքը Տերը հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո փողով վայր կգա երկնքից» (Ա Թեսաղոնիկեցիս 4.15): Հրեշտակապետի ձայնը և Աստծո փողը կհայտնեն ամբողջ աշխարհին, որ Տերը գալիս է, որպեսզի վերցնի Իր զավակներին Իր մոտ: «Եվ ամեն աչք կտեսնի Նրան» (Հայտնություն 1.7):

Այն օրը երկրագնդի ամբողջ բնակչությունը կբաժանվի երկու խմբի. մի խմբում կլինեն նրանք, ովքեր ծառայում էին Տիրոջը և սպասում Նրան, իսկ մյուս խմբում՝ նրանք, ովքեր չէին ծառայում Նրան:

Եթե դուք որոշել եք ծառայել Քրիստոսին և պատրաստվում եք Նրան դիմավորել, Նրա գալուստը ձեզ համար կլինի ուրախալի օր, և կկատարվի Նրա խոստումը. «Դարձյալ կգամ և ձեզ Ինձ մոտ կառնեմ»: Նա խոստացել է ձեզ համար տեղ պատրաստել, և այդ տեղի մասին գրված է. «Ինչ որ աչք չտեսավ, և ականջ չլսեց և մարդի սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար» (Ա Կորնթացիս 2.9):

Բայց եթե դուք որոշել եք չծառայել Քրիստոսին, եթե Նրա գալուստը ձեր ծրագրերի և հաշվարկների մեջ չի մտնում, ապա դուք կլինեք այն խմբի մեջ, որը նկարագրված է Հայտնություն 6.15-17-ում. «Եվ երկրի թագավորները և մեծամեծները և հարուստները և հազարապետները և զորավորները և ամեն ծառա և ամեն ազատ թաքցրին իրենց անձերը այրերի և սարերի, ժայռերի մեջ և ասում էին սարերին և ժայռերին. Վայր ընկեք մեզ վրա, և ծածկեցեք մեզ աթոռի վրա նստողի երեսից և Գառի բարկությունից, որ Նրա բարկության մեծ օրը եկել է, և ո՞վ կարող է կանգնել»:

Դա լուրջ հարց է. Ո՞վ կարող է կանգնել: Միայն նրանք, ովքեր Աստծո Խոսքում են փնտրում պաշտպանություն մոլորությունից: Նրանց խոստացված է. «Նա կծածկի քեզ իր փետուրներով, Նրա թևերի տակ ապահով կլինես, Նրա ճշմարտությունը ասպար է և զրահ» (Սաղմոս 91.4): Այդ մարդկանց համար սարսափելի չի լինի Քրիստոսի գալստյան օրը: «Եվ այն օրն ասելու են. Ահա մեր Աստվածը, որին մենք հուսացել ենք, և Նա մեզ փրկեց, ուրախանալու և ցնծալու ենք Նրա փրկությունով» (Եսայիա 25.9):

Բայց նրանք, ովքեր մերժել են Քրիստոսին, չեն կարող ապրել սուրբ Աստծո ներկայությամբ և կգերադասեն մեռնել ժայռերի բեկորների տակ: